ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N1
ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«01»«04» 2019թ.

ք.Իջևան

Իջևան համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Վ. Ղալումյանի, որը գործում է ՀՀ օրենսդրության հիման վրա (այսուհետ՝ Կրթաթոշակ տրամադրող կողմ) մի կողմից և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԲՈՒՀ) ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, (հետագա տեքստում երկուսը միասին՝ Կողմեր), կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կողմերը ստանձնում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողների համար սահմանված կրթաթոշակի հատկացման պարտականությունները:

1.2. Անվանական կրթաթոշակ նշանակվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի բակալավրիատի և մագիստրատուրայի առավել աչքի ընկնող, վերջին 3 կիսամյակում անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողին:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1.Սույն պայմանագրով Կրթաթոշակ տրամադրող կողմը պարտավորվում է ԲՈՒՀ-ին վճարել «Իջևան» անվանական կրթաթոշակ, որը կազմում է 50.000(հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ամսական 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ :

2.2. Կրթաթոշակ տրամադրող կողմը պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է ԲՈՒՀ-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.3. Կրթաթոշակ տրամադրող կողմը պարտավորվում է 2019 թ. սեպտեմբերից սկսված յուրաքանչյուր ամիս 5 ամիս տևողությամբ տրամադրել է 2.1. կետում նշված անվանական կրթաթոշակ:

2.4. Կրթաթոշակ տրամադրող կողմին իրավունք չի վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել՝ ավելացնել կամ նվազեցնել:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կողմերը պետք է ապահովեն սույն պայմանագրի 1.1. կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3. ԲՈՒՀ-ը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր :

4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ԲՈՒՀ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
Իջևանի մասնաճյուղ
ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան
Ուսանողական 3
«Արդշինբանկ»-ի Իջևանի մասնաճյուղ
Հ/Հ՝ 247610017094
ՀՎՀՀ՝ 01506928
Տնօրենի պաշտոնակատար՝
Ա.Ցուցուլյան

Ստորագրություն
Կ.Տ.

ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿՈՂՄ
Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Իջևան համայնքապետարան
Հասցե՝ Երևանյան,6
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900375121044
ՀՎՀՀ՝ 07601785
Համայնքի ղեկավար՝
Վ. Ղալումյան

Ստորագրություն
Կ.Տ.